

Թղթին, մէջ, զոր Յովհ. Խուլի կենսագրութեան մէջ յառաջ բերած եմ:

Զաքարիա Վ. 1606—10 միջոցներուն Ռուսիոյ եւ Վ. Պոլիս նուիրակած է արդեամբ Մեղքիսեդեկ կաթողիկոսի կողմանէ, ինչպէս կը յիշէ Գր. Վ. Դարանաղցի իր ժամանակագրութեան մէջ, զոր յիշատակած եմ Յովհ. Խուլի կենսագրութեան մէջ:

Ըստ այսմ անտարակուսելի է՝ որ այս Զաքարիա Վ. ն է, զոր Մեղքիսեդ կաթողիկոս ի Ս. Էջմիածին ՌԾԹ. (= 1610, սխալմամբ տպուած ՌՃԹ.) Մայիս 1 (թուականաւ առ Լեհաստան գրած կոնդակով՝ Իլով, կամենից, Սէչով, Եաշ եւ «Ֆռանկաստանու քրիստոնէիցդ առ հասարակ, նուիրակ ղրկած է: (կամենից, էջ 239—241.)

Զաքարիա Վ. այս նուիրակութեան ուղեւորելու ատեն հետն առած էր Գր. Վ. Կեսարացւոյ յիշած Մեղքիսեդ կաթողիկոսի առ Պօղոս Ե. Ս. Քահանայապետն Հռոմայ գրած դաւանութեան եւ հպատակութեան թուղթը, «15 Մայիս շաբաթ 1610, թուականաւ: Ասոր հայ բնագիրն անշուշտ պիտի գտնուի ի Հռոմ. լատին թարգմանութիւնը հրատարակած է Ստեփ. Վ. Ազարեան (Ecclesiae Armenae Traditio de Romani Pontificis Primatu Jurisdictionis... Romae, 1870, լատիներէն գրքին մէջ, էջ 113—121 առնելով՝ Bzovius, Rom. Pont. pag. 202) որուն ուրիշ առթիւ պիտի վերագրուեամ: Այս թղթոյն վերջը կ'ըսէ Մեղքի-